ԿԱՐԾԻՔ

(պաշտոնական ընդդիմախոսի)

Հենրիկ Համլետի Մանուկյանի «Բանկային համակարգի թվային փոխակերպման արդի գործընթացները և դրանց կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես մի շարք երկրներում, Հայաստանի Հանրապետությունում ևս բանկային համակարգը կազմում է ֆինանսական համակարգի զգալի մասը: Ֆինանսական համակարգը, որը կոչված է ապահովել ֆինանսական ռեսուրսների շրջանառությունը ողջ տնտեսության կտրվածքով, մշտապես ենթարկվում է փոփոխությունների: Ի թիվս մի շարք գործոնների, ինչպիսիք են մակրոտնտեսական զարգացումները, ներկայումս մեծ նշանակություն են ստացել տեխնոլոգիական զարգացումները, որոնք դրսևորվում են ֆինանսական ծառայությունների թվայնացման աճող դինամիկայով: Վերջինս հանգեցնում է ինչպես բանկերի գործառնական արդյունավետության բարելավման, այնպես էլ հաճախորդների բավարարվածության աճի և բանկերի ռիսկերի կառավարման համակարգերի ամրապնդման: Մյուս կողմից, ֆինանսական ոլորտում այլ խաղացողների, այդ թվում՝ տեխնոլոգիական կազմակերպությունների մուտքը վերջիններիս հնարավորություն է ընձեռում օգտվելու նախկինում միայն բանկերին հասանելի շահութաբերության աղբյուրներից՝ վտանգի ենթարկելով բանկերի մրցակցային դիրքի հիմքերը և, հետևաբար, նաև ապագա շահութաբերությունը:

Հիրավի, թվային փոխակերպումը, լինելով երկարաժամկետ հորիզոնում բանկերի բիզնես մոդելի կայունության վրա էական ազդեցություն ունեցող կառուցվածքային փոփոխություններից մեկը, արժանացել է բանկային համակարգը վերահսկող միջազգային մարմինների՝ Եվրոպական կենտրոնական բանկի և Բանկային վերահսկողության Բազելի կոմիտեի ուշադրությանը, որոնք իրենց խորքային վերլուծություններով ձևավորում են միջազգային վերահսկողական պրակտիկայի հիմքերը: Հատկապես Հայաստանի Հանրապետության դեպքում, որտեղ

տեխնոլոգիական զարգացումներն ընթանում են թվայնացման ռազմավարության և օրակարգի համաձայն և ներառում են ֆինանսական համակարգի դերակատարներին, բանկերի կողմից ժամանակին և արդյունավետորեն իրականացվող թվային փոխակերպումը հույժ կարևոր է: Այսպիսով, վերոնշյալ զարգացումները և գործոնները պայմանավորում են ընտրված թեմայի գիտական և գործնական արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության հիմնական նպատակն է գիտականորեն հիմնավորված միջազգային լավագույն փորձի ներդրմամբ բարելավել ՀՀ ԿԲ-ում բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման վերահսկողական համակարգը՝ հաշվի առնելով ՀՀ ԿԲ և ՀՀ բանկային համակարգի առանձնահատկությունները: Այս նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել թվային փոխակերպման հասկացությունը վերահսկողական գնահատումների տեսանկյունից, մասնավորապես՝ թվային փոխակերպման շարժիչ ուժերը, մակարդակները (տարատեսակները), դրսևորումները բանկային համակարգում, ապագա զարգացումների հավանական սցենարները և դրանցից բխող ռիսկերը, ինչպես նաև դրա կառավարումը կենտրոնական բանկերի կողմից,
- մշակել գիտականորեն հիմնավորված, բանկերի թվային փոխակերպման կառավարման վերահսկողական գնահատման մոդել՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի, գրականության ուսումնասիրության և գիտական մեթոդաբանական քայլերի վրա,
- ուսումնասիրել թվային փոխակերպման արդի գործընթացները ՀՀ-ում և գնահատել դրանց ազդեցությունը բանկային համակարգի վրա՝ բանկային համակարգի տեխնոլոգիական զարգացումների վերաբերյալ պատկերացում ձևավորելու համար,
- խմբավորել ՀՀ առևտրային բանկերն ըստ թվային փոխակերպման շարժիչ ուժերի նկատմամբ իրենց զգայունության և հավանական ազդեցության՝ նպաստելով վերահսկողական ռեսուրսների բաշխման արդյունավետության բարձրացմանը,
- ուսումնասիրել ՀՀ բանկային կարգավորման և վերահսկողության ընթացիկ պրակտիկան բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման կառավարման

համատեքստում՝ մշակված մոդելի ներդրմանը խոչընդոտող խնդիրները վեր հանելու համար,

- մշակել առաջարկներ ՀՀ ԿԲ-ի կողմից բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման գնահատման վերահսկողական համակարգի բարելավման ուղղությամբ, ինչպես նաև առաջարկել բացահայտված խնդիրների լուծման ուղիներ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության շրջանակում կատարված հետազոտությունները թույլ են տվել հասնել մի շարք գիտական արդյունքների, որոնցից գիտական նորույթ են հետևյալները.

1. Մշակվել է բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման վերահսկողական գնահատման մոդելը՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի և թեմային առնչվող գրականության ուսումնասիրության վրա, և կիրառելով կառավարման գիտության մեջ տեսության մշակման մեթոդաբանություն:
2. Գնահատվել է ՀՀ բանկային համակարգի վրա թվային փոխակերպման գործընթացների ազդեցությունը՝ հիմնվելով թեմատիկ վերլուծության մեթոդաբանության և հիմնավորված տեսության մեթոդաբանական տարրերի վրա:
3. Մշակվել է բանկերի խմբավորման նոր մեթոդ, որի հիմնական տարբերությունը գոյություն ունեցող այլ մեթոդներից կայանում է թվային փոխակերպման ռազմավարական ռիսկի նկատմամբ զգայունությունն արտացոլող երկու նոր ֆինանսական գործակիցների ներառման մեջ, որոնք մշակվել են՝ հաշվի առնելով ապագա ֆինտեխ զարգացումների տարբեր սցենարներ:
4. Մշակված նոր մեթոդաբանությամբ ՀՀ բանկերը խմբավորվել են ըստ թվային փոխակերպման ռազմավարական ռիսկի նկատմամբ զգայունության և դրանց հավանական ազդեցության, որը կարող է օգտակար լինել վերահսկողական ռեսուրսների բաշխման արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից:
5. Մշակվել են ՀՀ-ում բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման վերահսկողական գնահատման համակարգի բարելավմանն ուղղված առաջարկներ, որոնց ներդրման արդյունքում ակնկալվում է բանկերի ռազմավարական ռիսկի կառավարման բարելավում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթները, ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ **«Բանկային համակարգի թվային փոխակերպման գործընթացների ուսումնասիրության տեսամեթոդական հիմքերը»** գլխում ուսումնասիրվել են ֆինանսներում թվային փոխակերպմանն առնչվող ակադեմիական գրականությունը և կենտրոնական բանկերի կողմից բանկերի թվային փոխակերպման կառավարման միջազգային փորձը: Ակադեմիական գրականության շրջանակում առանձնակի անդրադարձ է կատարվել թվային փոխակերպման շարժիչ ուժերին, դրա տարատեսակներին, բանկային համակարգում դրա հիմնական դրսևորումների տեսակներին և օրինակներին: Բանկերի թվային փոխակերպման կառավարման միջազգային փորձի մասով քննարկվել է և՛ բանկային կարգավորման, և՛ բանկային վերահսկողության դերը և գործիքակազմը: Հիմնվելով միջազգային լավագույն փորձի վրա և կիրառելով գիտական մեթոդներ՝ հետազոտության արդյունքում մշակվել է բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման վերահսկողական գնահատման մոդել:

Երկրորդ՝ **«Հայաստանի Հանրապետությունում բանկային համակարգի թվային փոխակերպման կառավարման հիմնախնդիրները»** գլխում գնահատվել է ՀՀ-ում թվային փոխակերպման արդի գործընթացների ազդեցությունը ՀՀ բանկային համակարգի զարգացումների վրա, առաջարկվել է բանկերի՝ տեխնոլոգիական զարգացումներից բխող սպառնալիքների նկատմամբ խոցելիությունը հաշվի առնող խմբավորման նոր մեթոդ: Վերջինիս կիրառմամբ իրականացվել է ՀՀ առևտրային բանկերի խմբավորում, որի արդյունքը նպաստում է վերահսկողական ռեսուրսների նպատակային օգտագործման արդյունավետության բարձրացմանը: Բացի այդ, իրականացվել է ՀՀ-ում ներկայիս բանկային կարգավորման, բանկային վերահսկողական պրակտիկայի և ՀՀ կենտրոնական բանկի տեսլականի համադրում միջազգային լավագույն փորձի հիման վրա մշակված մոդելի բաղադրիչների հետ:

Երրորդ՝ **«Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի թվային փոխակերպման կառավարման բարելավման ուղիները»** գլխում առաջարկվել է բանկերի թվային փոխակերպման կառավարման բարելավման երեք հիմնական ուղիներ՝ հիմնված նախորդող գլուխների գիտական արդյունքների վրա: Առաջարկները ներառում են վերահսկողական քաղաքականության հստակեցումը, բանկերի թվային փոխակերպման ներհատուկ ռիսկի և ռիսկի կառավարման գնահատման բարելավման ուղիները:

Ատենախոսության վերջում՝ «Եզրակացություններ» բաժնում ներկայացված են ատենախոսության գլուխների հիմնական դրույթները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ինչպես հեղինակը նշում է, կատարված հետազոտությունները կենտրոնանում են տեխնոլոգիական զարգացումներով պայմանավորված թվային փոխակերպման ռազմավարական ռիսկի վրա:

   Կարծում ենք, որ թվային փոխակերպման ռիսկերի կառավարման ամբողջականությունն ապահովելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև թվային փոխակերպում յուրացնելու արդյունքում բանկերի գործառնական ռիսկերի փոփոխությանը և դրանց կառավարմանը:
2. Միջազգային լավագույն փորձի հիման վրա, գիտական մեթոդի կիրառմամբ հեղինակը մշակել և ներկայացրել է ԹՓՎԳ մոդելը:

   Կարծում ենք, որ աշխատանքի հիմնավորվածությունը կշահեր, եթե գիտական նորույթ հանդիսացող ԹՓՎԳ մոդելը ներկայացվեր առնվազն մեկ բանկի գնահատման օրինակով, ինչը կարող էր նաև համադրվել գործող կամ Եվրոպական կենտրոնական բանկի գնահատման համակարգի հետ՝ տարբերություններն առավել ակնհայտ դարձնելու համար:
3. Բանկերի խմբավորման վերլուծության մեջ կիրառվող զգայունության դրույքները և դիտարկված սցենարները հիմնված են ակադեմիական գրականության, հեղինակի իրականացրած հետազոտության և հեղինակի դատողական գնահատումների վրա:

Կարծում ենք՝ աշխատանքում զգայունության դրույքների արժանահավատությունը կշահեր, եթե դրանց սահմանման գործընթացում կիրառվեր նաև Դելֆի մեթոդը ոլորտի փորձագետների մասնակցությամբ: Նշվածը կօգներ նաև ստուգել հետազոտության արդյունքների՝ սցենարների հավանականությունների գնահատման գործընթացում դատողական գնահատման արժանահավատությունը:

4. Բանկերի խմբավորման վերլուծության մեջ հեղինակը կիրառում է մեքենայական ուսուցման մեթոդներ, մասնավորապես՝ հիերարխիկ կլաստերիզացիա և «K-Means++»՝ հիմնվելով 2024 թվականի տարեվերջի դրությամբ բանկերի՝ աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների տվյալների վրա:

   Կարծում ենք, որ հետազոտական թափանցիկություն ու վերարտադրելիությունն էլ ավելի կբարելավվեր, եթե հեղինակը օնլայն հարթակում (օրինակ՝ GitHub-ում) տեղադրեր համապատասխան վերլուծությունների ծրագրային կոդը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ 2026 թ. մայիսի 1-ից հասանելի են բանկերի՝ 2025 թ. տարվերջի դրությամբ աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները, հետաքրքիր կլիներ իրականացնել 2024-25 թթ. տվյալների հիման վրա ստացված արդյունքների համեմատություն՝ մեթոդի կայունությունը (robustness) կամ ժամանակի ընթացքում ՀՀ բանկերի բնութագրիչների հնարավոր տատանողականությունը գնահատելու համար:

5. Ատենախոսությունում ներկայացված վեց գծապատկերներից երկուսում առկա են անգլերեն անվանումներ, իսկ մեկում բացակայում է ուղղահայաց առանցքի վերնագիրը: Մասնավորապես՝ գծապատկեր 2.2.1-ում բանկերի անվանումները հանդիպում են անգլերենով, իսկ ուղղահայաց առանցքը չունի վերնագիր: Գծապատկեր 2.2.3-ում բանկերի անվանումները և կլաստերների քանակը հուշող ենթավերնագրերն անգլերեն են, թեև առանցքների վերնագրերը հայերեն են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված դիտողությունները բնավ չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը, արդյունքների տեսական ու կիրառական նշանակությունը: Հենրիկ Համլետի Մանուկյանի «Բանկային համակարգի թվային փոխակերպման արդի գործընթացները և դրանց կառավարման հիմնախնդիրները Հայաստանի

Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ամբողջական և պատշաճ գիտական մակարդակով իրականացված հետազոտություն է, որի շրջանակում առաջարկվել են ՀՀ-ում բանկային համակարգի թվային փոխակերպման կառավարման բարելավմանն ուղղված առաջարկություններ: Աշխատանքում իրականացված ակադեմիական գրականության ուսումնասիրությունը, օգտագործված տեսական և գործնական մոտեցումները գիտականորեն հիմնավորված, համոզիչ և ընդունելի են:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակված են 8 գիտական հոդվածներում, որոնցից մեկը՝ Scopus գիտատեղեկատվական շտեմարանում:

Ատենախոսության սեղմագիրը համարժեքորեն արտացոլում է աշխատանքի բովանդակությունն ու արդյունքները:

Այսպիսով, Հենրիկ Համլետի Մանուկյանի «Բանկային համակարգի թվային փոխակերպման արդի գործընթացները և դրանց կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
ՀՊՏՀ Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ **Լ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Լիանա Հայկազի Գրիգորյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտական քարտուղար՝ **Ն. Հ. ԴԱՐԲԻՆՅԱՆ**

3.հունիսի 2026 թ.